«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

"BLEJAN"
ECOLOGICAL, SOCIAL, BUSINESS
SUPPORT NGO

ԲԼ–Գ–013 11.09.2020

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Ռոմանոս Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան

2019թ.-ի մարտի 28-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի 18.03.2019թ.-ի թիվ 003 գրությանը պատասխան է տրվել, որ մինչ 01.01.2019թ.-ը Սևան Ազգային պարկ ՊՈԱԿ-ի տարածքում կնքվել է 908 վարձակալության պայմանագիր:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե.

- ✓ Քանի վարձակալության նոր պայմանագիր է կնքվել մինչև 01.09.2020թ.-ը(նշել վարձակալների ցանկը):
- ✓ Քանի վարձակալության հին պայմանագիր է լուծարվել մինչև 01.09.2020թ.-ը(նշել վարձակալների ցանկը, տեղանքը և լուծարման պատճառները):
- ✓ 908 վարձակալներից քանիսի պայմանագրերն են ենթակա լուծարման(նշել վարձակալների ցանկը, տեղանքը և լուծարման պատճառները)
- ✓ 908 վարձակալներից քանիսն են թույլատրելի նիշից ներքև կառուցապատում իրականացրել, որոնք ենթակա են ապամոնտաժման(նշել վարձակալների ցանկը, տեղանքը)
- ✓ Մինչև 01.09.2020թ.-ը քանի շինություն է ապամոնտաժվել (նշել ցանկը, տեղանքը և յուրաքանչյուր կառույցի համար ում միջոցներով է կատարվել/ու/ ապամոնտաժումը)
- ✓ Թույլ տրվում է արդյոք (վարձակալված տարածքները միմյանցից բաժանելու նպատակով) Սևանա լիճը գոտևորող տարածքներում քարե պարիսպների կառուցումը (տրամադրել հիմքերը)

Խնդրում եմ նաև տրամադրել տեղեկատվություն Սևանա լճի ջրի բարձրացման հետևանքով ջրածածկված տարածքների մասին, այն է.

- ✓ Մինչև 01.09.2020թ.-ը ընդհանուր առմամբ ինչքան ջրածածկված ափամերձ տարածքներ կան (նշել թե լճի որ հատվածում ինչքան է ջրածածկվել)

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com

- ✓ Ինչքան տարածք է մաքրվել մինչև 01.09.2020թ.-ը և ինչքան տարածք ունենք դեռ մաքրելու (նշել թե որ տարվանից է սկսվել մաքրումը, յուրաքանչյուր տարի լճի որ հատվածում ինչքան է մաքրվել, ինչ միջոցներով և աշխատանքներն իրականացնող կառույցը)
- ✓ Մինչև 1903,5մ նիշի ջրի բարձրանալը ինչքան տարածքներ դեռ կջրածածկվեն (նշել լճի որ հատվածներում է լինելու, յուրաքանչյուր տարածքում ինչքան):

Խնդրում եմ հնարավորության դեպքում տեղեկատվությունը տրամադրել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Թղթային տարբերակները ստանալու համար պատրաստ ենք վճարել, եթե էջերի թիվը գերազանցում է օրենքով պահանջվածը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալեմ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ Լիաննա Ասոյան

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com